ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 45
«27» «12» 2012թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ պարոն
Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզի Նոր Արմավիրի գյուղական համայնքի ավագանու կայացած 26 դեկտեմբերի 2012թ. թիվ 07 նիստի որոշումները:

Առդիր՝ 12 թերթ:

Նոր Արմավիր համայնքի ղեկավար՝ Կ. Գրիգորյան

11993-12
28 12 2012

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Նոր Արմավիր համայնքի ավագանու թիվ 07 նիստի

26 դեկտեմբերի 2012 թվական N 1

Որոշում

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

Ավագանին որոշեց ՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիրի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 7 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Գարիկ Թովմասյան | | | |
| 2. Ալբերտ Մարտոյան | | | |
| 3. Նորիկ Գրիգորյան | | | |
| 4. Դավիթ Դարբինյան | | | |
| 5. Համլետ Սստոյան | | | |
| 6. Գագիկ Թաքիրյան | | | |
| 7. Ալեքսան Ալեքսքնյան | | | |

Նոր Արմավիր Համայնքի Ղեկավար Կ. Գրիգորյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի
ԹԻՎ 07 ՆԻՍՏԻ N 1 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. Ավագանու 2012 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 07 նիստի օրակարգի հաստատում.

/ զեկուցող Կ. Գրիգորյան/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիրի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին.

/ զեկուցող Կ. Գրիգորյան/

3. Համայնքի ղեկավարի 2013 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

/ զեկուցող Կ. Գրիգորյան/

4. Համայնքի վարչական տարածքում 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին.

/ զեկուցող Կ. Գրիգորյան/

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիրի գյուղական համայնքի 2013 թվականի գյուղապետարանի և ենթակա հիմնարկների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների չափերը հաստատելու մասին.

/ զեկուցող Կ. Գրիգորյան/

6. Համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին.

/ զեկուցող Կ. Գրիգորյան/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Նոր Արմավիր համայնքի ավագանու թիվ 07 նիստի

26 Դեկտեմբերի 2012 թվական N 2-Ն

Որոշում

## ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «Բյուջետային Համակարգի Մասին» Հայաստանի Հանրապետության 32-րդ հոդվածով.

Ավագանին որոշեց՝

1. Հաստատել Նոր Արմավիր համայնքի 2013թ. բյուջեն՝
   ա/ եկամուտների գծով՝ 30382,3 հազար դրամ
   բ/ ծախսերի գծով՝ 30382,3 հազար դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամեւտները ըստ առանձին եկամտատեսակների
   հատված 1
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման
   հատված 2
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման
   հատված 3
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դիֆիցիտը /պակասորդը/
   հատված 4
6. Հաստատել համայնքի բյուջեի դիֆիցիտի /պակասորդի/ ֆինանսական աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները
   հատված 5
7. Հաստատել համայնքի բյուջեի 6-րդ հատվածը:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 40%-ը.
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| 1. Գարիկ Թովմասյան | | | |
| 2. Ալբերտ Սարտոյան | | | |
| 3. Նորիկ Գրիգորյան | | | |
| 4. Դավիթ Դարբինյան | | | |
| 5. Համլետ Սատոյան | | | |
| 6. Գագիկ Թաքիրյան | | | |
| 7. Ալեքսան Ալեքսանյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ն. Գրիգորյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Նոր Արմավիր համայնքի ավագանու թիվ 07 նիստի

26 դեկտեմբերի 2012 թվական

N 3

Որոշում

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1- ին մասի 26-րդ կետով.

Ավագանին որոշեց՝

1. Հաստատել Նոր Արմավիրի գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

| | կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| 1. Գարիկ Թովմասյան | | | |
| 2. Ալբերտ Մարտոյան | | | |
| 3. Նորիկ Գրիգորյան | | | |
| 4. Դավիթ Դարբինյան | | | |
| 5. Համլետ Մստոյան | | | |
| 6. Գագիկ Թաքիրյան | | | |
| 7. Ալեքսան Ալեքսանյան | | | |

Նոր Արմավիր Համայնքի Ղեկավար՝ Կ. Գրիգորյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված`
Հայաստանի Հանրապետության
Նոր Արմավիրի գյուղական համայնքի
ավագանու 26.12. 2012թ թիվ07 նիստի
թիվ 3 որոշմամբ

2013Թ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1 Աշխատակիցների թվաքանակը -12-

2 Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը`

| հհ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀՀ դրամ 2012թ. | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀՀ դրամ 2013թ. |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 140000.0 | 173000.0 |
| 2 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 95000.0 | 120000.0 |
| 3 | Գործավար | 1 | 50000.0 | 80000.0 |
| | Ընդամենը | | 285000.0 | 373000.0 |
| | ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | | |
| 4 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 110000.0 | 138000.0 |
| 5 | Առաջատար մասնագետ | 1 | 100000.0 | 126000.0 |
| 6 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 80000.0 | 103000.0 |
| 7 | Զին սեղանի կարիչ | 1 | 30000.0 | 45000.0 |
| | Ընդամենը | | 320000.0 | 412000.0 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| 8 | Մեխանիզատոր | 1 | 35000.0 | 45000.0 |
| 9 | Հավաքարար | 1 | 45000.0 | 62000.0 |
| 10 | Պահակ | 1 | 30000.0 | 45000.0 |
| | Ընդամենը | | 110000.0 | 152000.0 |

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11 | Մշակույթի տան տնօրեն | 1 | 35000.0 | 51000.0 |
| 12 | Գրադարանի վարիչ | 1 | 40000.0 | 57000.0 |
| | Ընդամենը | | 75000.0 | 108000.0 |

Համայնքի ղեկավար` Կ. Գրիգորյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Նոր Արմավիր համայնքի ավագանու թիվ 07 նիստի

26 դեկտեմբերի 2012 թվական N 4-Ն

Որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Սահմանել համայնքի տարածքում ֆիզիկական և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկությունների գործունեություն ծավալելու համար՝ ընթացիկ տարվա տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| | կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| 1. Գարիկ Թովմասյան | [signature] | | |
| 2. Ալբերտ Մարտոյան | [signature] | | |
| 3. Նորիկ Գրիգորյան | [signature] | | |
| 4. Դավիթ Դարբինյան | [signature] | | |
| 5. Համլետ Մստոյան | [signature] | | |
| 6. Գագիկ Թաքիրյան | [signature] | | |
| 7. Ալեքսան Ալեքսանյան | [signature] | | |

Նոր Արմավիր Համայնքի Ղեկավար [signature] Կ. Գրիգորյան

Հավելված

Սահմանված՝
Արմավիրի մարզի Նոր Արմավիր գյուղական համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 4-Ն որոշմամբ

Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

| Տեղական տուրքի անվանումը | Օրենքով սահմանված դրույքաչափը (հազ. դրամ) | Ավագանու կողմից հաստատված դրույքաչափը (հազ. դրամ) |
|---|---|---|
| 1. Համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների, շենքերի, շինությունների (ներառյալ ժամանակավոր) շինարարություն (շինարարական մոնտաժային աշխատանքներ) սկսելու թույլտվության համար, որից՝ | | |
| ա) հիմնական օբյեկտների համար | 0-50 | 10.0 |
| բ) մինչև 6քմ տարածք զբաղեցնող ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունների համար՝ | 0-20 | 5.0 |
| գ) 6քմ և ավելի տարածք զբաղեցնող ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունների համար՝ | 0-30 | 10 |
| 2. Համայնքի տարածքում գտնվող օբյեկտներըվերակառուցելու, ամրացնելու, արդիականացնելու, օբյեկտների արտաքին տեսքը փոփոխող այլ աշխատանքներ կատարելու թույլտվության համար՝ | 0-15 | 5 |
| 3. Համայնքի տարածքում գտնվող օբյեկտները քանդելու աշխատավքները սկսելու թույլտվության համար՝ | 0-5 | 5 |
| 4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի ընթացիկ տարվա վաճառքի թույլտվության համար՝ | | |
| ա) հիմնական շինությունների ներսում | 0-50 | 12 |
| բ) ոչ հիմնական շինությունների ներսում | 0-70 | 12 |

| | | |
|---|---|---|
| 5. Համայնքի տարածքում գազի և վառելիքա-քսանյութերի բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար՝ | 50-350 | 50 |
| 6. Համայնքի տարածքում ընթացիկ տարում արտաքին գովազդ տեղադրելու թույլիվության համար՝ | 5-50 | 10 |
| 7. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայության ընթացիկ տարում իրականացնելու թույլտվության համար՝ | 0-10 | 5 |
| 8. Համայնքի տարածքում, հանրային սննդի օբյեկտների ժամը 23.00-ից հետո ընթացիկ տարում աշխատելու թույլտվության համար՝ | 50-100 | 50 |

Գյուղապետ՝ Կ. Գրիգորյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Նոր Արմավիր համայնքի ավագանու թիվ 07 նիստի

26 դեկտեմբերի 2012 թվական

N5-Ն

Որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետի, 60-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերով.

Ավագանին որոշեց՝

1. Գյուղապետարանի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող յուրաքանչյուր տեղեկանքի համար գումար չի գանձվում:
2. Գյուղապետարանի կողմից մատուցվող ծառայության դիմաց՝
   ա/ տնտեսությունից խմելու ջրի համար– 800դրամ:
   բ/ տնտեսությունից աղբահանության համար -200 դրամ:
   գ/ համայնքային սեփականության հողերը օտարելու, վարձակալությամբ տրամադրել չափագրական և այլ աշխատանքներ կազմակերպելու համար մատուցվող ծառայությունների դիմաց՝ 1քմ համար- 10դրամ:
   դ/ գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապվա ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 5000 դրամ:
3. Նոր Արմավիրի մանկապարտեզի կողմից ծնողներից գանձվող երեխաների հաճախմա դիմաց վարձի չափ սահմանել 5000 դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

կողմ՝ դեմ՝ ձեռնպահ՝

1. Գարիկ Թովմասյան
2. Ալբերտ Մարտոյան
3. Նորիկ Գրիգորյան
4. Դավիթ Դարբինյան
5. Համլետ Մստոյան
6. Գագիկ Թաքիրյան
7. Ալեքսան Ալեքսանյան

Նոր Արմավիր Համայնքի Ղեկավար՝ Կ. Գրիգորյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Նոր Արմավիր համայնքի ավագանու թիվ 07 նիստի

26 դեկտեմբերի 2012 թվական

N 6-Ն

Որոշում

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1- ին մասի 5-րդ կետով.

Ավագանին որոշեց՝

1. Հաստատել՝ Նոր Արմավիրի գյուղական համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| | կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| 1. Գարիկ Թովմասյան | | | |
| 2. Ալբերտ Սարտոյան | | | |
| 3 Նորիկ Գրիգորյան | | | |
| 4. Դավիթ Դարբինյան | | | |
| 5. Համլետ Մստոյան | | | |
| 6. Գագիկ Թաքիրյան | | | |
| 7. Ալեքսան Ալեքսանյան | | | |

Նոր Արմավիր Համայնքի Ղեկավար՝ Կ. Գրիգորյան

Հավելված

Հաստատված՝
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիրի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 7 նիստի N 6-Ն որոշմամբ

ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման

ԿԱՐԳ

Համայնքի գործունեության կամավոր լիազորությունները

1. Պաշտպանության բնագավառում

1.1 Աջակցում է զորակոչին, զորահավաքներին, ուսումնավարժական հավաքներին.
1.2 Աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.
1.3 Միջոցներ է ձեռնարկում զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման ուղղությամբ, աջակցում է զինծառայության արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.
1.4 Աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

2.1 Իրականացվում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.
2.2 Իրականացվում է կառուցապատման աշխատանքները.
2.3 Կազմում է քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ըստ անհրաժեշտության մշակվող քաղաքաշինական փաստաթղթերի նախագիծը.
2.4 Կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը.
2.5 Կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

3. Հողօգտագործման բնագավառ

3.1 Իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.
3.2 Իրականացնում է ներտնտեսական հողաշինարարական աշխատանքներ.

4. Տրանսպորտի բնագավառ

4.1 Կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը.

5. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

5.1 Աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը

5.2 Աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.
5.3 Աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը
5.4 Աջակցում է երիտասարդության դերի բարձրացումը.
5.5 Հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեցիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը:

## 6. Առողջապահական ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ

6.1 Աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը.
6.2 Աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.
6.3 Նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը:

## 7. Գյուղատնտեսության բնագավառ

7.1 Աջակցում է գտյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը
7.2 Աջակցում է տոհմային սերմնաբուծական և սերմնաբուծական աշխատանքներին:

## 8. Նշված աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները համարվում են՝

8.1 Համայնքի բյուջեի եկամուտներից և օրենքով չարգելված այլ ֆինանսական մուտքերից.
8.2 Բարեգործական հատկացումներից, նվիրատվություններից, օրենքով չարգելված այլ աղբյուրներից: